




2021



ՏԵՂԱԿԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԴՊՐՈՑ



Տեղական ժողովրդավարության դպրոցի գնահատող հետազոտություն



CRRC
Armenia

Բովանդակություն

Հապավումներ.....	2
Գնահատման նպատակ և մեթոդաբանություն	3
Ծրագրի նպատակ, խնդիրներ, ակնկալվող արդյունքներ.....	4
Ծրագրում կատարված փոփոխություններ	5
Ծրագրի ընդհանուր գնահատում սահմանված նպատակներին հասնելու և ակնկալվող արդյունքներն ապահովելու տեսանկյունից	6
Երիտասարդ կադրերի բացահայտում	6
Երիտասարդների կարողությունների զարգացում.....	10
Երիտասարդների մտածելակերպի և աշխարհայացքի փոփոխություններ	16
Արդյունքների կայունություն և ինստիտուցիոնալ փոփոխություններ	18
Դասընթացների բովանդակություն և կառուցվածք	22
Քաղված դասեր	26
Եզրակացություն	35
Առաջարկություններ.....	37
Հավելված 1	40

Հապավումներ

ՏԺԴ	Տեղական ժողովրդավարության դպրոց
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ՀՖՄ	Համայնքների ֆինանսիստների միավորում
ԵՀՀ	Եվրասիա համագործակցություն հիմնադրամ
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Գնահատման նպատակ և մեթոդաբանություն

Այս գնահատումը նպատակ ունի հասկանալ՝ որքանով է ՏԺԴ ծրագիրը հասել սահմանված նպատակին, լուծել նախանշված խնդիրները և ապահովել ակնկալվող արդյունքները:

Մասնավորապես՝ գնահատման խնդիրներն են.

1. դուրսբերել՝ ինչ արդյունքներ է ապահովել ծրագիրը, և որքանով են դրանք կայուն,
2. հասկանալ՝ որքանով են ծրագրի նախատեսված գործողություններում կատարված փոփոխությունները թույլ տվել հասնել սահմանված նպատակներին և ապահովել ակնկալվող արդյունքները,
3. վերհանել ծրագրի իրականացման արդյունքում քաղված դասերը,
4. դուրսբերել ՏԺԴ-ի գործունեության բարելավման հնարավոր ուղիները:

Համապատասխանաբար, իրականացվել է ՏԺԴ ծրագրի արդյունավետության գնահատում, որի ընթացքում կիրառվել են տեղեկատվության հավաքագրման հետևյալ մեթոդները.

- փորձագիտական հարցազրույցներ ԱՄՆ ՄԶԳ-ի (1), ՀՖՄ-ի (2), ԵՀՀ-ի (1) ներկայացուցիչների հետ
- խորին հարցազրույցներ մարզերում ընդունող կազմակերպությունների հետ (10)
- ֆոկլուս խմբային քննարկումներ դասավանդողների (1) և մոնիթորինգի մասնագետների (1) հետ
 - *իզական և արական սեռի ներկայացուցիչներ*
 - *հյուսիսային, հարավային և կենտրոնական փնջի դասավանդողներ և մոնիթորինգի մասնագետներ*
- առցանց հարցում շրջանավարտների հետ (210)
 - *Առցանց հարցաթերթը տարածվել է ՏԺԴ պորտալի միջոցով, այնուհետև հետզանգեր են իրականացվել հարցաթերթը չլրացրած մասնակիցների շրջանում:*
- առցանց հարցազրույցներ դպրոցը կիսատ թողած մասնակիցների հետ (5)

Ստորև հակիրճ ներկայացված են ծրագրով նախատեսված նպատակը, խնդիրներն ու արդյունքները, ինչպես նաև ծրագրի գործողություններում կատարված ընթացիկ փոփոխությունները¹:

Ծրագրի նպատակ, խնդիրներ, ակնկալվող արդյունքներ

ՏԺԴ-ի հիմնական նպատակն է բացահայտել նոր մտածելակերպով շահագրգիռ ու եռանդուն երիտասարդների, տրամադրել նրանց ժամանակակից գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ, օգնել նրանց դառնալու նոր տիպի տեղական առաջնորդներ և ապագայում ստանձնելու առանցքային դերակատարություն տեղական ինքնակառավարման (ինչպես նաև՝ որոշակիորեն հանրային կառավարման) բարեփոխումների նախաձեռնման և կյանքի կոչման գործում:

ՏԺԴ-ի հիմնման հիմնական խնդիրներից է ՏԺԴ-ի շրջանավարտների կադրային բանկի ձևավորումը, ովքեր ունակ և պատրաստակամ կլինեն՝

1. Ընդգրկվել համայնքի կամ համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակազմերում:
2. Հանդես գալ որպես նախաձեռնող առաջնորդներ՝ կարողանալով ներագդել ՏԻՄ-երի որոշումների վրա, մշակել համայնքի զարգացման ծրագրերի նախագծեր, զբաղվել դրանց ֆոնդահայթայթմամբ, պատասխանատվություն կրել և ձեռնամուխ լինել այդ ծրագրերի իրականացմանը, մոնիթորինգին և գնահատմանը, և, այդ ամենով հանդերձ, բարելավել համայնքի բնակիչների կյանքի որակը:
3. Վերհանել ՏԻ ոլորտի համակարգային հիմնախնդիրները և հանդես գալ դրանց լուծման համար անհրաժեշտ իրավական դաշտի կատարելագործման և բարեփոխումների իրականացման նախաձեռնություններով, դրանց ընթացքի և արդյունքների հանրայնացմամբ, շահերի պաշտպանությամբ (ջատագովությամբ, լոբինգով):

ՏԺԴ-ից ակնկալվող արդյունքներն են.

1. Անհատական մակարդակում, ՏԺԴ-ում կրթված երիտասարդների տեղեկացված լինելը, ներգրավվածությունն ու մասնակցությունը համայնքի կառավարմանն ու զարգացմանը կօգնեն նրանց առաջիկայում կատարել ճիշտ ընտրություններ իրենց կյանքի հետագա գործողություններում՝ ձեռք բերելով

¹ Հաջորդ բաժնում ներկայացված տեղեկատվությունը վերցված է «Տեղական ժողովրդավարության դպրոցի կազմակերպման մեթոդաբանություն» փաստաթղթից

անհատի կարևորության զգացողություն և կենսագործունեության ազատություն:

2. Հասարակական մակարդակում, երիտասարդները ձեռք կբերեն կապեր ու ծանոթություններ ակտիվ այլ երիտասարդների հետ, ստեղծելով ծանոթությունների և համախոհների ավելի մեծ ցանց, ինչը նրանց հնարավորություն կտա օգտվել նաև այլոց փորձից ու գիտելիքներից:
3. Մեծ հաշվով, համակարգային, ինստիտուցիոնալ մակարդակում, երիտասարդների անհատական ակտիվությունը («ձնագնդի» էֆեկտով) կվերածվի ավելի մեծ հասարակական ակտիվության ու հնչեղության, նրանք կբարձրաձայնեն ու կարտահայտեն երիտասարդների համընդհանուր կարիքներն ու խնդիրները և միտված կլինեն համայնքում ստեղծելու տեղական ինքնակառավարման ավելի նպատակային, արդյունավետ և նորարարական եղանակներ, միջավայր և գործիքակազմ:

Ծրագրում կատարված փոփոխություններ

ՏԺԴ-ի շրջանակներում մարզային դասընթացների առաջին փուլը սկսվել է 2019 թվականի հուլիսին: Ութ (8) մարզերում իրականացվել են առկա վեցօրյա սեմինարներ: Համավարակով պայմանավորված՝ Արագածոտնի և Արարատի մարզերում առկա սեմինարներ չեն իրականացվել, դպրոցն անցել է առցանց ուսուցման ձևաչափին: Առաջին փուլում շրջանավարտներն ուսուցումն ավարտելուց հետո հնարավորություն են ստացել մշակել և իրականացնել դրամաշնորհային ծրագրեր:

Համավարակով պայմանավորված՝ ՏԺԴ-ի իրականացման երկրորդ փուլում (2020 դեկտեմբեր – 2021 մայիս) մարզերում ընտրվել են ընդունող (host) կազմակերպություններ, որոնք ստանձնել են տեղում մասնակիցների ներգրավման, դպրոցի և դրամաշնորհային ծրագրերի համակարգման գործառույթները: Այս փուլում դասընթացներն իրականացվել են առցանց, դասընթացավարների դեր են ստանձնել ՏԺԴ-ի առաջին փուլի շրջանավարտները՝ վերապատրաստված ՀՖՄ և ԵՀՀ փորձագետների կողմից: Շրջանավարտներից ընտրվել և վերապատրաստվել են նաև ծրագրի մոնիթորինգի և գնահատման մասնագետներ. յուրաքանչյուր մարզին կցվել է մեկ մոնիթորինգի մասնագետ, ով իրականացրել է տվյալ մարզում դրամաշնորհային ծրագրերի իրականացման մոնիթորինգ: Բացի այդ, ծրագրերի վերահսկմամբ զբաղվել են նաև ընդունող կազմակերպությունները: Այս փուլում դրամաշնորհները տրամադրվել են ոչ մրցութային կարգով. ծրագիր իրականացնելու հնարավորություն են ստացել դպրոցը հաջողությամբ ավարտած բոլոր մասնակիցները:

Ծրագրի ընդհանուր գնահատում սահմանված նպատակներին հասնելու և ակնկալվող արդյունքներն ապահովելու տեսանկյունից

Երիտասարդ կադրերի բացահայտում

Ծրագրի նպատակի առաջին մասը ենթադրում է «նոր մտածելակերպով շահագրգիռ ու եռանդուն երիտասարդ կադրերի» բացահայտում: Նշվել են հետևյալ թիրախային խմբերը.

18-35 տարեկան երիտասարդներ, մասնավորապես՝

1. միջնակարգ, միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթությունը նոր ավարտած կամ ավարտող երիտասարդներ, ովքեր կանգնած են իրենց ապագա գործունեության ձևի ընտրության առջև:
2. Համայնքների գործող ՏԻՄ-երում, աշխատակազմերում կամ ենթակառուցվածքներում աշխատող, կամ քաղաքացիական նախաձեռնություններում որոշակի մասնակցություն ցուցաբերած ակտիվ երիտասարդներ, ովքեր ցանկանում են վերապատրաստվել, սովորել կառավարման նոր ժամանակակից մեթոդներ:
3. Համայնքային գործընթացներում ներգրավվածության որևէ փորձ չունեցած երիտասարդներ:

Հայտերի ընդունման հայտարարությունները տեղադրվել են ՏԺԴ պաշտոնական ֆեյսբուքյան էջում, ՀՖՄ և ԵՀՀ վեբ-կայքերում, տարածվել են ընդունող կազմակերպությունների կայքերում և ֆեյսբուքյան էջերում, համայնքների պաշտոնական ֆեյսբուքյան էջերում կամ վեբ-կայքերում. ինչպես նաև տարատեսակ առցանց այլ հարթակներում, ուղարկվել են թիրախային հասցեներով:

Հարցաթերթը լրացրած շրջանավարտները նշել են, թե որտեղից են տեղեկացել դպրոցի մասին (բաց հարց, պատասխանները միավորվել են): Հարցվածների մեծամասնությունը (n=121, 47%) նշել է, որ իմացել է ՏԺԴ-ի մասին ֆեյսբուքից, շատերն (n=85, 33%) իմացել են ընկերներից կամ ծանոթներից, մնացածը՝ ՀՖՄ կայքից (n=21, 8%), ԵՀՀ կայքից (n=11, 4%), համայնքապետարանից (n=8, 3%) և այլ աղբյուրներից (n=13, 5%):

Հիմնականում ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչների մեծամասնությունը նշել է, որ ընդունվել են մեծ կամ բավարար քանակությամբ

հայտեր, որոնցից ընտրվել են ծրագրի նպատակներին առավել համապատասխան մարդիկ:

Փորձագետների խոսքերով.

«Հիմնական մասը եղել են 1-ին խմբի երիտասարդները, շեշտը դրվել է ուսանողների և շրջանավարտների վրա, նրանք եղել են ճնշող մեծամասնությունը: Նաև չեն բացառել 2-րդ, 3-րդ խմբերը»:

Փորձագետ 1

«Կարևորել են, որ դպրոցի մաս կազմեն ոչ միայն համայնքային աշխատողները, այլ համայնքային ծառայության հետ առնչություն չունեցող երիտասարդները: Մասնակիցները հայտ են լրացրել, որում եղել են բազային հարցեր՝ սեռ, տարիք, կրթական աստիճան, իրենց՝ ՏԻՄ-երի հետ համագործակցության փորձը, պատկերացումները համայնքի մասին, համայնքի խնդիրները, և թե ինչպես են պատկերացնում դրա լուծումը»:

Փորձագետ 2

Հարցաթերթը լրացրած 210 շրջանավարտների զգալի մեծամասնությունը (n=155, 71%) պետական բուհերի շրջանավարտներ են (տե՛ս գծապատկեր 3), 108-ն (51%) այս պահին աշխատում են լրիվ կամ կես դրույքով, 44-ը (21%) աշխատանք են փնտրում (տե՛ս գծապատկեր 4):

Ինչ վերաբերում է սահմանված ժողովրդագրական չափանիշներով (սեռ, տարիք, բնակության վայր) ՏԺԴ-ի շրջանավարտների բաշխվածությանը, հարցվածները գրեթե հավասար են բաշխված ըստ մարզերի (տե՛ս գծապատկեր 1): Հարցվածների շրջանում գերակշռում են 19-25 տարեկան երիտասարդները (տե՛ս գծապատկեր 2): Ներգրավվել են նաև 35-ից բարձր և 18-ից ցածր տարիքի անձիք:

«Նախատեսել են 18-35 տարեկան, սակայն ներառվել են նաև 16 տարեկան դպրոցականներ, և 35-ը բարձրացավ որոշ տեղերում մինչև 40, քանի որ ունեցել են մեծ ցանկություն և ակտիվ են եղել»:

Փորձագետ 1

Հարցաթերթը լրացրածների շարքում զգալիորեն գերակշռում են իգական սեռի ներկայացուցիչները (n=147, 70%):

Մասնակիցների շրջանում արական սեռի ներկայացուցիչների համամասնությունն ապահովելու բարդությունը հարցազրույցի ընթացքում արձանագրել է Շիրակի մարզի ընդունող կազմակերպության ներկայացուցիչը.

«...այսինքն 10 տղա, որից 8-ը չկարողացան մասնակցել, մի պարզ պատճառով, որ նախ մի կողմից սեսիաներն էին արդեն, դեկտեմբերի, էդ մի երկուսին էդպես, բայց մնացածին, մարդիկ արդեն առաջին դասին մասնակցել էին, զինկոմիսարիատներից զանգել են, որպեսզի պետք ա իրականացնեն ինժեներական, հողփորման, իբր սահմանազատման աշխատանքներ, ու մենք կորցրեցինք: Երկու տղա են շարունակել դասընթացները»:

Շիրակի մարզի ընդունող կազմակերպություն՝ «Տեղական ժողովրդավարության գրասենյակ» հիմնադրամ


Ընդհանուր առմամբ, ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչները նշել են, որ մասնակիցների ընտրության հարցում ուշադրություն է դարձվել ժողովրդագրական ցուցանիշներով հավասար բաշխվածության ապահովմանը, համայնքի խնդիրների վերաբերյալ երիտասարդների տեղեկացվածությանը և դրանց ուղղությամբ աշխատելու պատրաստակամությանն ու մոտիվացիային, հայտերի ինչպես բովանդակային, այնպես էլ տեխնիկական կողմին և դիմորդների ընդհանուր գրագիտությանը: Որոշ ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչներ նշել են, որ աշխատել են ներգրավել ինչպես ակտիվ և փորձառու, այնպես էլ սկսնակ և անփորձ երիտասարդների: Ընդունողներից ոմանք նաև նշել են, որ, բացի դիմորդների հայտերը դիտարկելուց, ճշտումներ են կատարել դիմած մասնակիցների որակների վերաբերյալ՝ օգտվելով իրենց ծանոթությունների ցանցից, ինչպես նաև ուսումնասիրել են դիմորդների սոցիալական ցանցերի էջերը: Որոշ ընդունողներ նշել են, որ աշխատել են ներգրավել նաև իրենց ծանոթ, այլ ծրագրերի շրջանակներում ակտիվություն ցուցաբերած անձանց: Այլ հարցվողներ նշել են, որ, ընդհակառակը, առավելություն են տվել իրենց անծանոթ դիմորդներին, որպեսզի հնարավորինս աշխատեցնեն համայնքների պոտենցիալը՝ չկենտրոնանալով միևնույն մարդկանց վրա:

Ինչ վերաբերում է դպրոցը կիսատ թողած մասնակիցներին, հարցվածների կողմից նշվել են դպրոցը լքելու հետևյալ պատճառները. 1) առողջական խնդիրներ, մասնավորապես՝ վարակում քովիդով 2) պատերազմում ներգրավված հարազատի վախճան 3) ՏԺԴ-ի համընկնում այլ զբաղվածության ժամանակահատվածին:


Ընդհանուր առմամբ, փորձագետների և ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչների արձագանքը ՏԺԴ-ի սաների որակների և համայնքներում ակտիվ հասարակական գործունեություն ծավալելու պատրաստակամության վերաբերյալ դրական է և արտացոլում է ծրագրի սահմանված նպատակն այն իմաստով, որ

ստեղծված մարդկային բազան ստեղծում է համայնքներում երիտասարդության և ՏԻՄ-երի համագործակցության նոր միջավայրի ձևավորման 'հեռանկար:


Գծապատկեր 1. Ձեր բնակության վայրը. n=210




Գծապատկեր 2. Քանի՞ տարեկան եք. n=210



Գծապատկեր 3. Ո՞րն է Ձեր ներկայիս կրթական մակարդակը. n=210




Գծապատկեր 4. Ձեր զբաղվածության կարգավիճակը



Երիտասարդների կարողությունների զարգացում

Ծրագրի նպատակով սահմանված է, որ ՏԺԴ-ն պետք է երիտասարդներին տրամադրի ժամանակակից գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ տեղական ինքնակառավարման և տեղական ժողովրդավարության վերաբերյալ:

Հարցաթերթը լրացրած շրջանավարտների զգալի մեծամասնությունը նշել է, որ դասընթացների ընթացքում ներկայացված տեղեկատվությունն արդյունավետ էր առօրյա աշխատանքում այն կիրառելու, ընդհանուր կարողությունների զարգացման և մասնագիտական զարգացման տեսանկյունից (տե՛ս գծապատկեր 5):



ՏԺԴ-ից հարցվողների նշած ակնկալիքների շարքում գերակշռում է ՏԻ համակարգի վերաբերյալ գիտելիքներ և դրանց հետ կապված հմտություններ ստանալու ակնկալիքը (n=135, 64%) (այլ ակնկալիքները տե՛ս աղյուսակ 1-ում): Մասնակիցների ակնկալիքների համապատասխանությունը ծրագրի խնդիրներին արտացոլում է մասնակիցների ճիշտ թիրախավորումը: Ընդ որում, ակնկալիքների հարցում իգական և արական սեռի ներկայացուցիչների պատասխանների միջև վիճակագրորեն նշանակալի տարբերություններ չեն բացահայտվել:

<i>Աղյուսակ 1. Մինչև դպրոցին մասնակցելը ինչպիսի՞ ակնկալիք(ներ) ունեիք դպրոցից (Բաց հարց, ընդունվել է առավելագույնը երեք պատասխան, պատասխանները միավորվել են)</i>	N	%
Գիտելիքներ և հմտություններ, ծանոթացում ՏԻ համակարգին	135	47
Ծանոթությունների ձեռքբերում	40	14
Փորձ, պրակտիկա	40	14
Հնարավորություններ (գումար աշխատել, նոր աշխատանք գտնել, ՏԻՄ-երի հետ աշխատել, ՏԺԴ թիմին միանալ)	25	9
Վկայական	25	9
Մեծ ակնկալիքներ	17	6
Նպաստում համայնքի զարգացմանը	4	1

Ինչ վերաբերում է դրամաշնորհային ծրագրերի իրականացման միջոցով երիտասարդների կարողությունների զարգացմանը, հարցաթերթը լրացրած շրջանավարտների զգալի մասը դրամաշնորհային ծրագիր են իրականացրել տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության թեմայի շրջանակներում (ավելի մանրամասն տե՛ս գծապատկեր 6):

Ֆոկուս-խմբային քննարկումներին մասնակցած շրջանավարտները, ովքեր ծրագրի երկրորդ փուլում ստանձնել են դասընթացավարների և մոնիթորինգ իրականացնողների դերեր, նշել են, որ ծրագիրն արդյունավետ էր տեղական ժողովրդավարության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման և երիտասարդներին համայնքային խնդիրների լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու կարողություններով զինելու տեսանկյունից: Նույն կարծիքն են արտահայտել նաև ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչները: Ե՛վ շրջանավարտների, և՛ ընդունող կազմակերպությունների կարծիքով, հատկապես երիտասարդների կարողությունների զարգացմանը նպաստել է դպրոցի կառուցվածքը, որը թույլ է տվել երիտասարդներին ստացած տեսական գիտելիքները կիրառել գործնականում՝ իրականացնելով դրամաշնորհային ծրագրեր:

«...դասընթաց չէ, իրոք որ ՏԺԴ, «դպրոց» բառը էստեղ ես կարևորում եմ՝ անպայման շեշտենք, որովհետև ինքը դպրոցի դեր կատարեց. շուրջ 1 ամիս, իրոք մենք խորը գիտելիքներ ստացանք, մնայուն»:

ՏԺԴ մոնիթորինգ/զննահատում իրականացնողների հետ Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից


«Երևի ոչ միայն ես, այլ մասնակիցներից շատերը ունեցել ենք տեսական գիտելիքներ ստանալու ակնկալիք, բայց իրականում ստացել ենք տեսական գիտելիքների այնքան պաշար, որը հետագայում բավարար է եղել գործնականում կիրառելու համար»:

ՏԺԴ մոնիթորինգ/զննահատում իրականացնողների հետ Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից

Դասընթացավարների հետ իրականացված ֆոկուս-խմբային քննարկման ժամանակ հնչել է այն կարծիքը, որ թե՛ դասընթացավարների, թե՛ ուսանողների համար դասընթացները կարող էին լինել ավելի հետաքրքիր, եթե ՏԺԴ փորձագետների կողմից վերապատրաստվող դասընթացավարներին տրամադրվող նյութերի և դասախոսությունների ներկայացման տրամաբանությունը լիներ ավելի ճկուն, և հնարավորություն տար դասընթացավարներին ավելի անհատական մոտեցում որդեգրելու դասընթացի կազմակերպման և թեմայի ներկայացման գործընթացում: Միաժամանակ, քննարկման այլ մասնակիցներ նշել են, որ ճկունությունը բավարար էր, և դրա ավելացման դեպքում կարող էր սուժել դպրոցի ընդհանուր ձևաչափն ու մոտեցման համապարփակությունը:

Որոշ ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչներ շեշտել են երիտասարդների կարողությունների զարգացման գործընթացում առաջացած մի դժվարություն. մասնակիցների շրջանում դրամաշնորհային ծրագրեր կազմելու և հաղորդակցություն վարելու հմտությունների պակասը: Կարողությունների զարգացման գործընթացում, համապատասխանաբար, ընդունող կազմակերպությունները ստիպված են եղել իրենց ժամանակային և մասնագիտական ռեսուրսի մի մասը ներդնել մասնակիցներին վերոնշյալ հմտությունները փոխանցելու ուղղությամբ, քանի որ փորձագետների կողմից այդ հմտությունների զարգացմանն ուղղված բավարար քայլեր չեն ձեռնարկվել: Ընդունողներից ոմանք առաջարկել են, որ նման կարողությունների զարգացումը կարող է նույնպես ներդրվել ՏԺԴ-ի կրթական ծրագրում. ընդունող կազմակերպությունները կարող են իրականացնել մասնակիցների շրջանում այս հմտությունների զարգացման նախապես մշակված և պլանավորված դասընթացներ:

Գծապատկեր 6. Ո՞ր թեմայի շրջանակներում եք իրականացրել դրամաշնորհային ծրագիրը. n=210



Ստորև ներկայացված են թեմաները, որոնց շուրջ հարցված շրջանավարտները կցանկանային լսել հավելյալ ավելի մանրամասն դասախոսություններ (տե՛ս աղյուսակ 2):

<i>Աղյուսակ 2. Ո՞ր թեմաների վերաբերյալ կցանկանայիք հավելյալ/ավելի մանրամասն դասախոսություն լսել/ուսումնասիրել (ընդունվել են բոլոր հնարավոր պատասխանները)</i>	N
Համայնքի զարգացման ծրագրեր	114
Համայնքի տնտեսական զարգացում	94
Համայնքի բյուջե	91
Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը	77
Քննադատական մտածողություն	72
Հաղորդակցություն	67
Մարդու իրավունքները համայնքային կառավարման և հաղորդակցության համատեքստում	62
Մշտադիտարկում և գնահատում	55
Համայնքի զարգացման ծրագրերի մոնիթորինգ և գնահատում, բյուջեի աուդիտ և գնահատում	54
Կազմակերպական կառավարում	51
Համայնքի աշխատակազմի կառուցվածքը, կարողությունները, համայնքային ծառայություն	50
Համայնքի հանրային բնույթի ծառայություններ	46
ՀՀ ՏԻ համակարգի առանձնահատկությունները	38
Վարչատարածքային բարեփոխումներ, միջհամայնքային համագործակցություն	32
Կազմակերպության քաղաքականություններ և ընթացակարգեր, կառավարման ավտոմատացում	27
ՏԻ համակարգի տեղն ու դերը հանրային կառավարման համակարգում	11

Ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչները նշել են, որ ՏԺԴ-ում սովորած որոշ երիտասարդներ դպրոցը սկսելուց առաջ գրեթե տեղեկացված չէին համայնքի խնդիրների լուծման գործընթացում բնակիչների ներգրավվածության հնարավոր

մեխանիզմներից, և զարմանքով ու ոգևորությամբ էին ծանոթանում այդ մեխանիզմներին ուսուցման գործընթացում: Տեղական ինքնակառավարմանն ու ժողովրդավարությանը վերաբերող թեմաներով հավելյալ դասախոսություններ լսելու պատրաստակամությունն արտացոլում է մասնակիցների հետաքրքրվածությունը:

Այս համատեքստում որակական տեսանկյունից ծրագիրը հաջողել է սահմանված արդյունքին հասնելու առումով՝ բարձրացնելով տեղական ինքնակառավարման և տեղական ժողովրդավարության վերաբերյալ համայնքների երիտասարդության իրազեկվածության ընդհանուր մակարդակը:

Երիտասարդների մտածելակերպի և աշխարհայացքի փոփոխություններ

Ծրագրով նախատեսվել է ՏԺԴ սաներին օգնել դառնալու նոր տիպի տեղական առաջնորդներ և ապագայում ստանձնելու առանցքային դերակատարություն տեղական ինքնակառավարման (ինչպես նաև՝ որոշակիորեն հանրային կառավարման) բարեփոխումների նախաձեռնման և կյանքի կոչման գործում:

Ծրագրի ակնկալվող արդյունքներից է ՏԺԴ-ում կրթված երիտասարդների տեղեկացված լինելը, ներգրավվածությունն ու մասնակցությունը համայնքի կառավարմանն ու զարգացմանը, ինչը պետք է օգնի նրանց առաջիկայում կատարել ճիշտ ընտրություններ իրենց կյանքի հետագա գործողություններում՝ ձեռք բերելով անհատի կարևորության զգացողություն և կենսագործունեության ազատություն:

Վերոնշյալ նպատակի և արդյունքների ապահովումը ենթադրում է համայնքի խնդիրների և դրանց լուծմանն ու համայնքի զարգացման գործընթացում ներգրավվածության վերաբերյալ ընկալումների որոշակի փոփոխություն, նոր աշխարհայացքի ձևավորում, որը պիտի հիմքեր ստեղծի տեղական ժողովրդավարության կայուն զարգացման համար:

Առցանց հարցաթերթը լրացրած երիտասարդների 42%-ը նշել է, որ դպրոցում սովորելը փոփոխությունների է հանգեցրել իրենց աշխարհայացքում (նշված փոփոխությունները տե՛ս աղյուսակ 3-ում):

<i>Աղյուսակ 3. Ինչպիսի՞ փոփոխություններ են տեղի ունեցել ձեր ընկալումներում (բաց հարց, պատասխանները միավորվել են)</i>	N
<i>Մասնակցայնության կարևորության գիտակցում (համայնքային կյանքում, հետաքրքրվածություն համայնքային խնդիրներով, պահանջատիրություն, իրավունքներ, պատասխանատվության բարձրացում, հետևողականություն)</i>	78

ՏԻՄ-երի դերի և կարևորության գիտակցում (<i>ՏԻՄ-երից վախի հաղթահարում, համայնքապետարանի գործունեության, պարտականությունների, բյուջեի, քնակիչների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում</i>)	49
Իրատեսություն	37
Դրական փոփոխություն	22
Ես-ի ընկալումների փոփոխություն (<i>առաջնորդական հմտություններ և ինքնագնահատականի բարձրացում, ինքնավստահություն</i>)	14
Քննադատական մտածողության զարգացում	5
Մասնագիտական կողմնորոշում	3
Ժողովրդավարության կարևորության գիտակցում (<i>«տեղական ժողովրդավարություն» եզրույթի հասկացում</i>)	3
Կապեր հաստատելիս ազնվության կարևորում	2

Երիտասարդների աշխարհայացքի փոփոխությունների մասին խոսել են նաև ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչները, դասընթացավարներն ու մոնիթորինգ իրականացնողները.

«Իրենց մոտ մտքի փոփոխություն է լինում նաև ինչ-որ առումով, որ շատ հանգիստ համայնքում կարելի է իրականացնել ծրագրեր և դժվար չէ գտնել միջոցներ»:

«Մա արդեն շարժ է համայնքում, ու իրենք էլ հասկանում են, որ համայնքի խնդիրները և իրենք անջատ չեն իրարից, եթե ինքը էստեղ է, կա խնդիր, ապա կա նաև լուծում, և ինքը ունի դեր էղ լուծման մեջ»:

Արարատի մարզում ընդունողի դեր ստանձնած ՏԺԴ շրջանավարտ (ընդունող կազմակերպության փոխարեն)

«Ես եթե հիշում եմ սրանից 3-4 տարի առաջ ավագանու նիստերին գնալը ամոթ էր, հիմա արդեն ավագանու նիստերին կարաս գնաս, պարզ ճակատով մասնակցես, որովհետև հասկացել են, որ դա ամոթ չի, ու հասնել դրան մի մարզում, որը որ ամենացածր լեվելում [մակարդակում] էր»:

Արագածոտնի մարզի ընդունող կազմակերպություն՝ «Միավորող կամուրջ» սոցիալական ՀԿ

«Փոփոխություններից առաջինը այն էր, որ երիտասարդներից շատերը հասկացան, որ իրենք են իրենց համայնքի տերը, կարող են իրականացնել տարբեր գործողություններ, տարբեր ծրագրեր, կարող են դրականորեն ազդել իրենց համայնքի վրա ու եթե իրենք իրենց տեղից իրար չգան, ապա ուրիշ ոչ ոք դա չի անելու»:

Արմավիրի մարզի ընդունող կազմակերպություն՝ «Միտք» ՀԿ

«Էս դպրոցի գիտելիքը, էն մնայուն գիտելիքն է, որը էլի եմ ասում, քեզ որպես համայնքի արժանապատիվ, քո իրավունքը, քո պարտականությունը իմացող քաղաքացու կերպարի մեջ է պահում»:

ՏԺԴ մոնիթորինգ/գնահատում իրականացնողների հետ Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից

Ընդհանուր առմամբ հետազոտության մասնակիցների արտահայտած կարծիքները փաստում են, որ ծրագիրը հաջողել է երիտասարդների ընկալումների փոփոխության արդյունքին հասնելու տեսանկյունից:

Արդյունքների կայունություն և ինստիտուցիոնալ փոփոխություններ

Ծրագրով նախատեսվող արդյունքների շարքում նշված է ակտիվ երիտասարդների մեծ ցանցի ձևավորումը և երիտասարդների անհատական ակտիվության վերածումն ավելի մեծ հասարակական ակտիվության ու հնչեղության:

Փորձագետների խոսքերով, ինստիտուցիոնալ բնույթի փոփոխությունները և ծրագրի ձեռքբերումների շարունակականությունը, ըստ էության, ծրագրի գլխավոր արդյունքը պետք է լինեն:

«Պահանջվում էր ակտիվացնել երիտասարդներին, որպեսզի նրանք հնարավորինս նախաձեռնողականություն դրսևորեն տեղական ինքնակառավարման գործընթացներում, որը հիմք կձառայեր երիտասարդների ներուժը հանրային կառավարման համակարգում ներդնելու»:

Փորձագետ 1

«Ուժեղ կողմը հասկանալու համար պետք է սպասել այս տարվա ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքներին: Այսինքն, շրջանավարտներից քանիսը կարողացան առնվազն ներգավիել, առաջադրվել տարբեր կուսակցությունների կողմից»:

Փորձագետ 3

«Շատ կարևոր է, որ ՏԺԴ-ի միջոցով իրավունքահենությունը որպես կառավարման հայեցակարգ մտավ շրջանատման մեջ: Այսինքն այս տիպի խոսույթը մարզերում մտավ հանրային շրջանակների մեջ, ինչը նույնպես կարևոր ձեռքբերում է:

Փորձագետ 4

Դպրոցի արդյունքների կայունության և ինստիտուցիոնալ փոփոխությունների գրավականն, ըստ էության, երիտասարդների ստացած գիտելիքների կիրառումն է գործնականում: Ենթադրվում էր, որ դրամաշնորհային ծրագրերի իրականացման շնորհիվ երիտասարդները պետք է ոչ միայն մեկանգամյա լուծումներ առաջարկեն համայնքային խնդիրներին, այլև ապահովեն ծրագրի գործողությունների շարունակականությունը՝ տարածելով դպրոցից ստացված գիտելիքները համայնքի այլ ակտիվ երիտասարդության շրջանակներում, ստեղծելով համախոհների ցանցեր, հիմք դնելով և ամրապնդելով ՏԻՄ-երի հետ համագործակցությունը:

Համապատասխանաբար, դպրոցի արդյունքների կայունության առաջին ցուցանիշներից է դպրոցն ավարտելուց հետո մասնակիցների ներգրավվածությունը դպրոցի գործողություններում, գործնական ծրագրերի իրականացումը, մասնակցությունը միջոցառումներին, ակտիվությունը առցանց հարթակներում և այլն: Առցանց հարցաթերթը լրացրած շրջանավարտների զգալի մասը նշել է, որ իրականացրել է դրամաշնորհային ծրագիր, որոշ մասը ներգրավված է եղել նաև այլ գործողություններում դպրոցն ավարտելուց հետո (տե՛ս աղյուսակ 4):

<i>Աղյուսակ 4. Դպրոցն ավարտելուց հետո ի՞նչ ներգրավվածություն էք ունեցել ՏԺԴ-ում (ընդունվել են բոլոր հնարավոր պատասխանները)</i>	N	%
Ընդգրկվել եմ դասավանդողների և/կամ գնահատում և մոնիթորինգ իրականացնողների խմբում	19	7
Իրականացրել եմ դրամաշնորհային ծրագիր	159	56
Մասնակցել եմ ՀՖՄ-ի կողմից կազմակերպված միջոցառումներին	27	10
Ակտիվ եմ եղել ՖԲ-յան խմբում	47	17
Նշվածներից ոչ մեկը	29	10

Արդյունքների շարունակականության և ինստիտուցիոնալ փոփոխությունների մասին խոսում են ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից ներկայացված բազմաթիվ հաջողության պատմությունները.

«Մեր ծրագրի ավարտից հետո էլ խումբը քիչ չի կայացել ա, քիչ չի ֆոնդայզինգ ա անում, իրա համար լիքը բան ա ձեռքբերել, ինքը ակտիվ գործունեություն ա ծավալում, որ արդեն իրա համայնքն ա սկսել ճանաչելի դարձնել ուրիշ տեղերում»:

Լոռու մարզի ընդունող կազմակերպություն՝ «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ

«Վարդենիկում մեր երիտասարդները էլի շարունակում են ակտիվ աշխատել, դրանից հետո էլի համայնքապետարանի հետ ծրագրեր են իրականացնում, այսինքն իրանց գիտելիքները նպաստում ա, որ մի քայլ առաջ ավելի զարգացում ապահովեն»

Գեղարքունիքի մարզի ընդունող կազմակերպություն՝ «Գեղարեզ» ԿՄԵ ՀԿ

«Ի ուրախություն մեզ, Ոսկեհատ համայնքում իրականացվեց ծրագիր, որի ընթացքում երեխեքը իրականացրին դասընթացներ, (...) քննարկումներ, ու իրենք էնքան մտտիկացան էլ խմբերով, նախ ՏԺԴ-ի մասնակիցներով, 4 հոգի էին, ու հետո էլ էտ մասնակից երեխեքի հետ ու նան նրանք ֆոկլուս-խումբ քննարկում ունեին համայնքային աշխատողների ու ուսուցիչների հետ, ու էնքան մտերմացան, որ իրանք ՀԿ են բացել»

Արագածոտնի մարզի ընդունող կազմակերպություն՝ «Միավորող կամուրջ» սոցիալական ՀԿ

Դրական է նաև հարցվածների կարծիքը ՏԻՄ-երի կողմից ծրագրի վերաբերյալ ստացված արձագանքի և երիտասարդների հետ համագործակցության մշակույթի զարգացման վերաբերյալ.

«Իսկ նան որպես հասարակական-քաղաքական փոփոխություն կրնոթագրելի այն, որ շատ ՏԻՄ-եր, համայնքների ղեկավարներ, այսինքն՝ համայնքապետեր, տեսան, որ իրենց համայնքներում կան ակտիվ երիտասարդներ, ու շատ դրական է ստացվում, երբ որ իրանք համագործակցում են իրենց հետ ու էլ համագործակցության արդյունքում իրենց իսկ համայնքի համար ծնվում են շատ լավ ծրագրեր»:

Արմավիրի մարզի ընդունող կազմակերպություն ' «Միտք» ՀԿ

Շրջանավարտներից և ընդունողներից ոմանք նշել են, որ դրամաշնորհային ծրագրերի իրականացման ընթացքում երիտասարդները երբեմն բախվել են ՏԻՄ-երի հետ համագործակցություն հաստատելու դժվարությունների: Կարևոր է, որ այս գործընթացում երիտասարդներն ընդունող կազմակերպությունների և կազմակերպիչների օժանդակությամբ շարունակել են աշխատել համագործակցություն հաստատելու ուղղությամբ:

Տեղական ժողովրդավարության զարգացման տեսանկյունից ծրագրի անուղղակի արդյունքներից է նաև ոչ միայն համայնքների երիտասարդների ցանցի ձևավորումը, այլև ծրագրին առնչություն ունեցած ՀԿ-ների միջև կապերի ամրապնդումը և ապագա նոր համագործակցությունների ուղիների բացումը: Այս մասին ևս խոսել են ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչները:

«հնարավորություն տվեց նաև մեզ, որ մենք իմանանք, որ ասենք Սյունիքում, Լոռիում և այլն (...) ես չգիտեի, որ Տավուշում կար այսպիսի մեկ այլ կազմակերպություն (...) նույն ձևի ասենք Սյունիքում կամ Արմավիրում և այլն, մեզ համար դա շատ կարևորություն էր (...), որ նոր ծանոթություններ, ներփոքրինգ կարողացանք ունենալ»

Շիրակ մարզի ընդունող կազմակերպություն ' «Տեղական ժողովրդավարության գրասենյակ» հիմնադրամ

Ծրագրի արդյունքների կայունության հետագա ապահովման համար ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից առաջարկվել են մի շարք գործողություններ, այդ թվում.

- դպրոցի ընդլայնում և խորացում յուրաքանչյուր մարզի տարբեր համայնքներում գործընկեր կազմակերպությունների ցանցի ձևավորման միջոցով,
- մարզերում ՏԺԴ շրջանավարտների խորհուրդների ստեղծում,
- այլ երկրների հետ փոխանակման ծրագրերի իրականացում,
- ամառային դպրոցի կամ ճամբարի ձևաչափի մշակում,
- լոբինգ ՏԻՄ-երի և նախարարությունների (ՏԿԵՆ և ԿԳՄՍՆ) բյուջեներում երիտասարդներին նմանատիպ դրամաշնորհների տրամադրման բլոկի ավելացման ուղղությամբ,
- ՏԺԴ ինքնաֆինանսավորման այլ ուղղությունների քննարկում և մշակում,


- ընդունող կազմակերպությունների համագործակցության հարթակի ստեղծում:

Դասընթացների բովանդակություն և կառուցվածք

Առցանց հարցաթերթը լրացրած շրջանավարտները գնահատել են դպրոցն՝ ըստ մի շարք կառուցվածքային և բովանդակային բաղադրիչների:

Ընդհանուր առմամբ, հարցվածների մեծ մասը նշել է, որ դպրոցը հիմնականում կամ լիովին համապատասխանել է իրենց ակնկալիքներին (տե՛ս գծապատկեր 7):

Ընդ որում, չեն հայտնաբերվել վիճակագրորեն նշանակալի կապեր դպրոցի՝ շրջանավարտների ակնկալիքներին համապատասխանության աստիճանի և շրջանավարտների սեռի, տարիքի, սովորելու ժամանակահատվածի և ձևաչափի (առցանց/դեմ առ դեմ) միջև: Բոլոր խմբերի շրջանավարտների մեծամասնությունը նշել է, որ դպրոցը համապատասխանել է իրենց ակնկալիքներին:




Շրջանավարտներին առաջարկվել է գնահատել դպրոցի մի շարք բաղադրիչներ: Ներկայացված բոլոր բաղադրիչներով հարցվածները հիմնականում դրական են գնահատել դպրոցը (տե՛ս գծապատկեր 8):


Համաձայն գծապատկեր 9-ի՝ բարձր է նաև շրջանավարտների գոհունակությունը բոլոր դասընթացներից: Հարցվածների մեծամասնությունը բարձր է գնահատել նաև դասավանդողների հմտությունները (տե՛ս հավելված 1):

Սա արտահայտում է, մի կողմից, դասընթացավարների լավ պատրաստվածությունը և թեմաների ճիշտ ընտրությունը, մյուս կողմից՝ մասնակիցների ճիշտ թիրախավորումը, քանի որ դասընթացային ձևաչափի ծրագրերի ընդհանուր գնահատման փորձը ցույց է տալիս, որ, որպես կանոն, արդյունքներով ավելի բավարարված են մնում հետաքրքրված և մոտիվացված անձիք:


Գծապատկեր 8. 5 բալանոց սանդղակով, որտեղ 1-ն նվազագույն գնահատականն է, իսկ 5-ը՝ առավելագույն, գնահատեք ինդիքում դպրոցի հետևյալ բաղադրիչները. n=169-210



Գծապատկեր 9. Որքանո՞վ եք գոհ հետևյալ դասընթացներից. n=210



Դրական է գնահատվել նաև ընդունող կազմակերպությունների, փորձագետների և ՏԻՄ-երի հետ համագործակցությունը ծրագրի ընթացքում (տե՛ս գծապատկեր 10):




Ինչպես երևում է գծապատկեր 10-ից, ըստ շրջանավարտների ՏԻՄ-երի հետ համագործակցության փորձը որոշակիորեն ավելի անարդյունավետ էր, քան ընդունող կազմակերպությունների և փորձագետների հետ համագործակցությունը: ՏԻՄ-երի հետ համագործակցության ընթացքում ծագած որոշ խնդիրներ ավելի մանրամասն ներկայացված են հաջորդ բաժնում:

Քաղված դասեր

Որակական և քանակական տվյալների համադրությունը թույլ է տվել դուրսբերել մի շարք խնդիրներ ու դժվարություններ, որոնց բախվել են ծրագրի կազմակերպիչները, փորձագետները, դասավանդողները, մոնիթորինգի մասնագետները, ուսուցանվողները: Հարցվածները ներկայացրել են նաև այդ խնդիրների և

դժվարությունների հաղթահարման հնարավոր ուղիների վերաբերյալ իրենց պատկերացումները:

Առցանց հարցաթերթը լրացրած շրջանավարտները նշել են, թե ինչ դժվարությունների են հանդիպել դպրոցում (տե՛ս գծապատկեր 11):



Գծապատկերից երևում է, որ հարցվածների մեծամասնության (n=123, 59%) տեսանկյունից դպրոցի ընթացքում որևէ դժվարություններ չեն ծագել, իսկ նշված դժվարությունների շարքում են դասերի առցանց բնույթը (n=22, 11%), կազմակերպչական դժվարությունները (n=16, 8%), ինչպես նաև գիտելիքի և փորձի պակասը (n=11, 5%):

Դասընթացների առցանց անցկացումը պայմանավորված է եղել համավարակով և այդ առումով անխուսափելի էր: Դասերի առցանց կազմակերպման մարտահրավերների մասին խոսել են նաև փորձագետներն ու դասընթացավարները՝ մատնանշելով, որ այս ձևաչափը ենթադրում է ուսումնական պլանում ավելի մեծ ուշադրություն ինտերակտիվ բաղադրիչներին, ավելի կարճ դասախոսություններ և ավելի մեծ ջանքեր՝ ուղղված մասնակիցների ծանոթությանը և ցանցի ձևավորմանը: Միաժամանակ, ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչները նշել են, որ առանձին դեպքերում դեմ առ դեմ հանդիպումների կազմակերպումը զգալիորեն օգնել է հաղթահարել առցանց ուսուցումից ծագած խնդիրները, նպաստել է ՏԺԴ-ի երիտասարդների ծանոթությունների ցանցի ձևավորմանը և, համապատասխանաբար, մոտիվացիայի աճին: Այս առումով, լիովին դեմ առ դեմ ձևաչափին անցնելու անհնարինության դեպքում հետագայում լուծում կարող է հանդիսանալ դասընթացների միայն որոշ մասի դեմ առ դեմ անցկացումը:

Ինչ վերաբերում է կազմակերպչական դժվարություններին, հատկապես ուշադրության է արժանի իրականացվող դրամաշնորհային ծրագրերին տրամադրված ժամանակահատվածը: Ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչներից ոմանք նշել են, որ երիտասարդները հաճախ դժվարությամբ էին հասցնում իրականացնել ծրագրերը սահմանված ժամանակահատվածում, ստիպված էին լինում աշխատել լարվածության տակ, իսկ ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչներն իրենց հերթին ստիպված էին անընդհատ շտապեցնել ծրագրերն իրականացնող երիտասարդներին: Այս խնդրի արձանագրումը, մի կողմից, կարող է նշանակել, որ ծրագրերին հատկացված ժամանակահատվածն իսկապես կարճ էր՝ հաշվի առնելով ՏԻՄ-երի հետ համագործակցության նախաձեռնման ընթացքում ծագող հարցերի և հետաձգումների հնարավորությունը, մյուս կողմից, կարող է արտացոլել ծրագրերի ոչ արդյունավետ նախագծումը, ինչն էլ հանգեցնում է նախատեսված ժամկետներում սահմանված գործողությունների իրականացման դժվարություններին: Այս առումով հարկավոր է ուշադրություն դարձնել ժամկետների իրատեսությանը և ծրագրերի պլանավորման ընթացակարգի կատարելագործմանը:

Նշված վերջին խնդիրը մասնակիցների գիտելիքների և փորձի պակասն է, ինչը կարող է հանգեցնել նյութի ոչ արդյունավետ յուրացմանը: Հաշվի առնելով, որ դպրոցն անցնելիս մասնակիցներն անցնում են նաև երեք փուլերով իրականացվող թեստավորում, և հարցաթերթը լրացրած շրջանավարտները հաջողել են թեստերը հանձնելու հարցում, կարելի է ենթադրել, որ նախնական գիտելիքների պակասն իրապես չի խանգարել նրանց՝ դասընթացներից օգուտ քաղելու հարցում: Փորձի պակասի հաղթահարումն, իր հերթին, հնարավոր է միայն փորձի ձեռքբերման

ճանապարհով: Միաժամանակ, նույնիսկ մասնակիցների փոքրամասնությունից ստացված նման տեղեկատվությունը կարող է նշանակել, որ դպրոցի նպատակը՝ ներգրավելու նաև անփորձ և մինչ ՏԺԴ-ն որևէ ակտիվ համայնքային գործունեություն ու տեղական ժողովրդավարության և տեղական ինքնակառավարման հարցերի շուրջ հետաքրքրվածություն չցուցաբերած մասնակիցների, վերանայման կարիք ունի, այն իմաստով, որ նյութի մատուցումը նման երիտասարդների համար, հավանաբար, պետք է տարբերվի ավելի փորձառու և ակտիվ երիտասարդների համար նյութի մատուցումից:

Առցանց հարցաթերթը լրացրած շրջանավարտներից նրանք, ովքեր իրականացրել են դրամաշնորհային ծրագրեր, նշել են դրանց իրականացման ընթացքում ծագած որոշ դժվարություններ (տե՛ս աղյուսակ 5):

<i>Աղյուսակ 5. Ի՞նչ դժվարությունների էք հանդիպել ծրագիրն իրականացնելիս (բաց հարց, պատասխանները միավորվել են)</i>	<i>N</i>
Շահառուների հավաքագրման դժվարություն և համայնքի բնակիչների պասիվություն	30
Կազմակերպչական, ադմինիստրատիվ, տեխնիկական և բյուջեի կառավարման դժվարություններ (անհրաժեշտ գույքի և տրանսպորտային միջոցների ապահովման խնդիրներ, համավարակով պայմանավորված սահմանափակումներ, չնախատեսված ֆինանսական ծախսեր)	28
Ծրագրերի իրականացման ժամկետների չբավարարելը և ժամանակացույցի անհարմարությունը	16
ՏԻՄ-երի հետ հաղորդակցման դժվարություններ և ներքաղաքական խնդիրներ (առանց համայնքապետ համայնքների, ավագանիների մանդատի վայր դնելը ծրագրի իրականացման փուլում)	10
Կարծրատիպեր. ՏԻՄ-երի վերաբերյալ իրազեկվածության պակաս և անտարբերություն	6
Բարձր պահանջներ, փորձի և գիտելիքի անբավարարություն	4
Թիմի ներսում անարդյունավետ հաղորդակցություն	4
ՏԺԴ փորձագետների հետ հաղորդակցման դժվարություններ	3
Պատերազմ	2

Նշված խնդիրներից առաջինը և ամենահաճախ արձանագրվածը՝ շահառուների հավաքագրման դժվարությունը և համայնքի բնակիչների պասիվությունը, վկայում է հենց ՏԺԴ-ի ստանձնած առաքելության կարևորության մասին: Այս հարցում կարևոր է ծրագրի հեռանկարային ազդեցությունը և ՏԺԴ նոր շրջանավարտների համար ՏԻՄ-երի հետ համագործակցության «դռների բացումը»: Այս հարցին անդրադարձել են նաև ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչները և փորձագետները՝ նշելով, որ դպրոցի արդյունքում մեծանում է բնակիչների հետ համագործակցելու ՏԻՄ-երի պատրաստակամությունը: Կարևոր է այն, որ նման բարդությունների ծագման դեպքում ծրագրեր իրականացնող երիտասարդները ստանան պատշաճ աջակցություն մասնագետների կողմից: Ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչները նշել են, որ այդ աջակցությունը երիտասարդներին տրամադրվել է, ընդ որում՝ մասնագետներն աշխատել են ոչ թե երիտասարդների փոխարեն լուծել առաջացած խնդիրները, այլ օժանդակել նրանց ՏԻՄ-երի հետ համագործակցություն հաստատելու համար անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու հարցում: Ծրագրի հետագա զարգացման տեսանկյունից կարևոր է հաշվի առնել ՏԻՄ-երի հետ համագործակցության հաստատման խոչընդոտները՝ համապատասխանաբար մշակելով ծրագրերի իրականացման ժամկետները, շարունակելով դպրոցի վերաբերյալ ՏԻՄ-երի իրազեկման գործընթացը, հորդորելով երիտասարդներին պատրաստակամ լինել հաղթահարելու նման խոչընդոտները և զինելով նրանց այդ հաղթահարման համար անհրաժեշտ գիտելիքներով: Այս առումով օգտակար կարող է լինել համայնքում նման գործունեություն ծավալած և այդ փորձն ունեցած երիտասարդների և «նորաթուխ» ակտիվ երիտասարդության հանդիպումների ու փորձի փոխանակման միջոցառումների կազմակերպումը:

Առցանց հարցաթերթը լրացրած շրջանավարտները նշել են նաև, թե ինչ փոփոխություններ կցանկանային տեսնել ՏԺԴ-ում (տե՛ս աղյուսակ 6):

<i>Աղյուսակ 6. Ի՞նչ փոփոխություններ կցանկանայիք տեսնել ՏԺԴ-ում (բաց հարց, պատասխանները միավորվել են)</i>	<i>N</i>
Հնարավորության դեպքում դասընթացների դեմ առ դեմ իրականացում	36
Համագործակցության շարունակականություն և ՏԺԴ-ի ընդլայնում (ՏԺԴ թիմի ընդլայնում մարզերում, միջհամայնքային և միջմարզային համագործակցություն, ՏԺԴ շրջանավարտների հետ համագործակցության շարունակություն և հնարավորության դեպքում աշխատանքով ապահովում, ՏԺԴ նոր շրջանավարտների վերապատրաստում որպես դասընթացավարներ, շրջանավարտների ՀԿ-ների հիմնադրում)	31

Դասընթացների ձևաչափի փոփոխություն (խաղային և ինտերակտիվ մասերի ընդլայնում, ճամբարային ձևաչափ, դասընթացների թեմաների ընդլայնում և նոր թեմաների ավելացում)	18
Դրամաշնորհների և դասընթացների շարունակականություն և ընդլայնում	17
Դասընթացավարների փոփոխություն (ՏԺԴ փորձագետների, այլ ոչ թե վերապատրաստված շրջանավարտների կողմից դասընթացների իրականացում)	15
Դասընթացների և ծրագրերի իրականացման ժամկետների ավելացում	5
Հաղորդակցության բարելավում	4
Ծրագրերի հաստատման և իրականացման ընթացակարգի փոփոխություն	2
Դպրոցի ֆինանսավորմանը համայնքի խոշոր ներդրողների ներգրավում	1

Ամենահաճախ հանդիպած պատասխանները դասընթացների դեմ առ դեմ անցկացումն է, որն արդեն քննարկվել է, և ՏԺԴ ցանցի ընդլայնումն ու դպրոցի շարունակականության ապահովումը, ինչը փաստում է ընդհանուր առմամբ դպրոցի հաջողվածության և մասնակիցների ճիշտ զանգվածի ընտրության մասին:

Որպես դպրոցի ընթացքում ծագած խնդիրների հաղթահարման ուղիներ հարցվողներն առաջարկել են (բաց հարց, պատասխանները միավորվել են)։

1. դասերի ընթացքի փոփոխություն, այդ թվում՝ դասերի ընթացքում ընդմիջումների ընդգրկում, հարցերի ու պատասխանների բաժնին ավելի շատ ժամանակի տրամադրում, համայնքներ այցերի կատարում պրակտիկ աշխատանքի փորձ ստանալու նպատակով (n=5)
2. դասընթացավարների փոփոխություն (n=4)²
3. ժամանակացույցի վերանայում՝ ավելացում (n=2)
4. թեստերի պահանջների հստակեցում (n=6)
5. ծրագրերի թեմաների ընդլայնում/վերանայում (n=5)
6. ծրագրերի շրջանակներում ՏԻՄ-երի հետ համագործակցության բարելավում (n=3)
7. դասերի իրականացման ձևաչափի փոփոխություն՝ դասընթացները դեմ առ դեմ կամ առցանց անցնելու ընտրության հնարավորության ստեղծում (n=3)

² Դասընթացավարներն ընդհանուր առմամբ բարձր են գնահատվել շրջանավարտների կողմից, սակայն ոմանք արտահայտել են այն կարծիքը, որ ՏԺԴ փորձագետների կողմից դասընթացների անցկացումն ավելի արդյունավետ է, քան շրջանավարտների վերապատրաստումը որպես դասընթացավարներ:

Ընդհանուր առմամբ, ՏԺԴ-ի բարելավմանն ուղղված հարցվողներն առաջարկել են նաև հետևյալ գործողությունները.

<i>Աղյուսակ 7. Ձեր կարծիքով, ընդհանուր առմամբ ինչպե՞ս կարելի է բարելավել ՏԺԴ-ն թեմատիկ, կառուցվածքային, հասանելի կոմպոնենտների տեսանկյունից և այլն (բաց հարց, պատասխանները միավորվել են)</i>	N
Դրամաշնորհային ծրագրերի թեմաների ավելացում, փոփոխություն, գործնականում գիտելիքների կիրառման հնարավորության ընդլայնում, գործնական օրինակների շատացում	35
Դասընթացավարների և մոնիթորինգ իրականացնողների կազմի փոփոխություն կամ կրկնակի վերապատրաստում, աշխատանքի կազմակերպման և հաղորդակցության բարելավում	13
Համագործակցության շարունակականության ապահովում, շրջանավարտների և ՏԻՄ-երի հետ հանդիպումների կազմակերպում, կարծիքների գնահատում	13
Մարզերում ընդգրկվածության բարձրացում, հեռավոր համայնքների ընդգրկում, մարզային դպրոցների հետ համագործակցություն	12
Դասընթացների միայն դեմ առ դեմ անցկացում	8
Սոցիալական ցանցերում ՏԺԴ-ի ակտիվության և տեսանելիության բարձրացում	7
Մարզային գրասենյակների ստեղծում	5
Դասաժամերի վերանայում, ժամանակացույցի վերանայում	3
ՏԺԴ փորձագետների ավելի ակտիվ մասնակցություն	2
Դասընթացների և՛ օնլայն, և՛ դեմ առ դեմ անցկացում	2
Մասնակիցների տարիքային շեմի փոփոխություն	2
Համագործակցություն պետական և տեղական այլ կառույցների և սփյուռքի հետ	2

Հատկանշական է, որ տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության թեման գերակշռող է ինչպես հարցված երիտասարդների կողմից իրականացված ծրագրերի շարքում, այնպես էլ այն թեմաների շարքում, որոնց շրջանակներում հարցված երիտասարդները կցանկանային այլ ծրագիր իրականացնել (տե՛ս գծապատկեր 12):

Այս առումով հարկավոր է հասկանալ՝ որքանով է համայնքներում տեղական ժողովրդավարության զարգացման տեսանկյունից նպատակահարմար դպրոցի

ռեսուրսների կենտրոնացումը հենց այս թեմայով ծրագրերի իրականացման ուղղությամբ: Ապագայում հնարավոր է նախատեսել կոնկրետ թեմաներով հետաքրքրված երիտասարդների թիրախավորում:

Ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչներից ոմանք առաջարկել են ՏԺԴ-ի ընդունող կազմակերպությունների միջև հաղորդակցության համար որևէ ֆորմալ հարթակի ձևավորում, ինչպես նաև ունիվերսալ ֆորմալ ընթացակարգերի մշակում: Կազմակերպությունների ներկայացուցիչները նշում էին, որ չնայած՝ տեղի էր ունենում ընդունող կազմակերպությունների միջև որոշակի փոքրձի փոխանակում, ավելի արդյունավետ կլիներ, եթե համագործակցության ձևաչափն ավելի մշակված լիներ:

Ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչներն առաջարկում էին նաև միջմարզային համագործակցության ընդլայնում դրամաշնորհային ծրագրերի իրականացման գործընթացում: Հաշվի առնելով ՏԺԴ-ի արդյունքում համայնքների զարգացման հարցում երիտասարդների ակտիվացման միտումը՝ ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչները նշում էին, որ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի ընդլայնումը մարզային համագործակցության մակարդակ էլ ավելի կնպաստի ակտիվ երիտասարդների ցանցի ձևավորմանը և տեղական ժողովրդավարության մշակույթի զարգացմանը:

Գծապատկեր 12. Այլ ի՞նչ թեմաների շրջանակներում կցանկանայիք իրականացնել ծրագիր. n=210



Ինչ վերաբերում է մոնիթորինգ իրականացնողների հետ համագործակցությանը, ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչները հիմնականում նշել են, որ համագործակցության փորձը դրական էր, սակայն ոմանք առաջարկել են, որ մոնիթորինգի մասնագետը ներգրավված լինի ընդունող կազմակերպության թիմում, ինչն ավելի դյուրին և արդյունավետ կդարձնի համագործակցությունը:

Եզրակացություն

Ընդհանուր առմամբ, ծրագիրը հասել է սահմանված նպատակին և ապահովել է ակնկալվող արդյունքները՝ չնայած համավարակով պայմանավորված սահմանափակումներին և ընթացքում կատարված փոփոխություններին:

Ծրագրի հաջողության կարևոր գործոններից էր մասնակիցների ճիշտ թիրախավորումն ու ընտրությունը: Առցանց հարցաթերթը լրացրած մասնակիցների շրջանում գրեթե հավասարապես են բաշխված բոլոր մարզերի բնակիչները: Ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչները նշել են, որ ապահովվել է նաև մասնակիցների ընտրության հավասարաչափ բաշխումը՝ ըստ մարզի համայնքների և/կամ բնակավայրերի:

Ինչ վերաբերում է մասնակիցների բաշխվածությանն ըստ սեռի, առցանց հարցաթերթը լրացրած հարցվողների զգալի մասը (70%) իգական սեռի ներկայացուցիչներ են, ինչն արտահայտում է Հայաստանում իրականացված այլ բազմաթիվ ծրագրերի փորձով ամրապնդվող իրականությունը. ակտիվ և հետաքրքրված երիտասարդության շրջանում գերակշռում են իգական սեռի ներկայացուցիչները: Արական սեռի ներկայացուցիչների մասնակցությունն ապահովելու բարդության մասին խոսել է մեկ ընդունող կազմակերպության ներկայացուցիչ:

Ինչ վերաբերում է տարիքային բաշխմանը, հարցաթերթը լրացրածների շրջանում գերակշռում են 19-25 տարեկան երիտասարդներ: Հարցվածները հիմնականում բուհերի շրջանավարտներ են:

Մասնակիցների ընտրության հաջողության կարևոր գործոններից է եղել այն, որ ընտրության գործընթացում ուշադրություն է դարձվել դիմորդների մոտիվացիային, համայնքային խնդիրների վերաբերյալ իրատեսական պատկերացումներին և համայնքային հարցերով զբաղվելու պատրաստակամությանը: Այս մոտեցման շնորհիվ ծրագրի մասնակիցներից շատերը դրական արդյունքներ են գրանցել դրամաշնորհային ծրագրեր իրականացնելիս: Բացի այդ, մասնակիցների նման թիրախավորումը հնարավորություն է տվել ապահովել երիտասարդների աշխարհայացքի փոփոխության ակնկալվող արդյունքը:

Մյուս կողմից, այս մոտեցումը հնարավորություն չի տվել լիովին ապահովել պասիվ երիտասարդների ներգրավման նախանշված խնդիրը: Այս խնդրին ապագայում անդրադառնալու հնարավոր եղանակները ներկայացված են առաջարկություններում:

Ծրագիրն ապահովել է ակնկալվող արդյունքներն այն իմաստով, որ երիտասարդները ստացել են մի կողմից համապատասխան կարողություններ և գիտելիքներ, մյուս կողմից՝ գործնականում դրանք կիրառելու հնարավորություն: Այս առումով ծրագրի արդյունքների ապահովման տեսանկյունից լիովին արդարացվել է տեսական ուսուցման և գործնական մասի համատեղման ձևաչափը:

Բացի այդ, չնայած ուսուցման առցանց ձևաչափին անցմանը՝ հաջողվել է նաև ծրագրի՝ ցանցերի ձևավորման բաղադրիչը: Ծրագրի շրջանակներում ցանցերի ձևավորումը եղել է լայն և բազմամակարդակ. մի կողմից, ցանցեր են ձևավորվել ՏԺԴ շրջանավարտների և համայնքների այլ երիտասարդների, մյուս կողմից՝ ընդունող կազմակերպությունների միջև: Կարևոր է, որ արդյունքում ձևավորված ցանցերն ինքնուրույն են և անկախ՝ կենտրոնացված չեն ծրագիրն իրականացնող կազմակերպությունների շուրջ:

Ընդ որում, հմտությունների, գիտելիքների և ծանոթությունների ձեռքբերումը առցանց հարցաթերթը լրացրած շրջանավարտների կողմից ամենահաճախ է նշվել՝ որպես ՏԺԴ-ից ունեցած ակնկալիք: Մասնակիցների ակնկալիքների համապատասխանությունը ծրագրի նախանշված խնդիրներին ևս խոսում է մասնակիցների ընտրության ճիշտ ռազմավարության մասին:

Առցանց հարցաթերթը լրացրած շրջանավարտների զգալի մասը նշել է, որ դրամաշնորհային ծրագիր է իրականացրել տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության թեմայի շրջանակներում: Նույն թեման գերակշռում է նաև այն թեմաների շրջանում, որոնց վերաբերյալ մասնակիցները կցանկանային ապագայում ևս մեկ ծրագիր իրականացնել: Հաշվի առնելով, որ մասնակցության պրակտիկաները կենտրոնական նշանակություն ունեն տեղական ժողովրդավարության զարգացման տեսանկյունից՝ այս արդյունքը ևս կարելի է համարել ծրագրի հաջողության գործոն:

Ծրագրի կայունության և արդյունքների շարունակականության ապահովման իմաստով արդյունքներն ապահովվել են երկու մակարդակում. երիտասարդների աշխարհայացքի փոփոխության և տեղական ժողովրդավարության պրակտիկաների ինստիտուցիոնալացման: Երիտասարդների աշխարհայացքի փոփոխությունն արտահայտվել է առցանց հարցման արդյունքներում, ինչպես նաև ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչների և փորձագետների հետ իրականացված հարցազրույցներում: Ինստիտուցիոնալացումը տեղի է ունեցել տարբեր մակարդակներում. ծրագրի շրջանավարտները հիմնել են հասարակական կազմակերպություններ, ներգրավվել են տեղական ինքնակառավարման

գործընթացներում, ձևավորել են համայնքային հարցերով հետաքրքրված ու խնդիրներով զբաղվելու պատրաստակամ բնակիչների ցանցեր: Շատ կարևոր է նաև այն, որ փորձագետները և ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչներն արձանագրել են աշխարհայացքի փոփոխություն համայնքների աշխատակազմերում. ծրագիրը նպաստել է ՏԻՄ-երում երիտասարդների հետ աշխատելու և նրանց կարծիքներն ու ներդրումը հաշվի առնելու պրակտիկաների զարգացմանը:

Ծրագրի ընդհանուր հաջողվածությունն արտահայտվում է նաև շրջանավարտների կողմից ծրագրի բովանդակային ու կառուցվածքային բաղադրիչների բարձր գնահատականներում և ծրագրի շարունակականության անհրաժեշտության վերաբերյալ բոլոր շահառուների պատկերացումներում:

Չնայած փոքր թվով դժգոհությունների՝ արդարացված կարելի է համարել նաև դասընթացավարների և մոնիթորինգի մասնագետների վերապատրաստման և նրանց գործունեության կազմակերպման ձևաչափը:

Առաջարկություններ

- Առցանց հարցման արդյունքները ցույց են տալիս, որ մասնակիցների զգալի մասը ծրագրի մասին իմացել է սոցիալական ցանցերից և ծանոթներից: Նպատակահարմար է շարունակել օգտագործել այդ հարթակները ծրագրի վերաբերյալ շահառուների իրազեկման համար:
- Ծրագրի նպատակների տեսանկյունից նպատակահարմար է 16-35 տարեկան երիտասարդների թիրախավորումը: Միաժամանակ, արդարացվել է նաև առանձին դեպքերում ավելի բարձր տարիքի մարդկանց ներգրավման պրակտիկան: Նպատակահարմար է հետագայում ևս առաջնորդվել այդ ռազմավարությամբ:
- Սուր է համայնքի պասիվ երիտասարդների ներգրավման հարցը. հաշվի առնելով, որ, չնայած հիմնականում ակտիվ երիտասարդների ներգրավմանը, առցանց հարցաթերթը լրացրած շրջանավարտներից ոմանք նախնական գիտելիքների և հմտությունների պակաս էին արձանագրում, ավելի քիչ տեղեկացված և պասիվ երիտասարդների ներգրավումը կարող է նպատակահարմար չլինել: Խնդրի հնարավոր լուծում կարող է լինել քիչ տեղեկացված ու պասիվ երիտասարդների համար առանձին ներածական դասընթացների անցկացումը, որից հետո նրանց միացումը ավելի տեղեկացված երիտասարդների խմբերին:

- Դասընթացների առցանց ձևաչափի վերաբերյալ ստացված գնահատականները ցույց են տալիս, որ հարկավոր է հնարավորության սահմաններում կիրառել ինչպես առցանց, այնպես էլ դեմ առ դեմ դասընթացների ու հանդիպումների ձևաչափը՝ մասնակիցների շրջանում կապերի ու ծանոթությունների ձևավորումն ապահովելու նպատակով: Առցանց ձևաչափը ցանկալի է դարձնել ավելի ինտերակտիվ և բազմազան:
- Ծրագրի ընդլայնման առաջարկվող ուղիներն են.
 - ՏԺԴ-ի համագործակցությունը հանրակրթական դպրոցների և բուհերի հետ,
 - ամառային/ձմեռային ճամբարների ձևաչափով դասընթացների իրականացումը,
 - ՏԺԴ շրջանավարտների մարզային խորհուրդների ստեղծումը,
 - յուրաքանչյուր մարզում գործընկեր կազմակերպությունների թվի ավելացումը:
- Ծրագրի հետագա զարգացման և արդյունքների ապահովման տեսանկյունից առաջարկվում է միջմարզային համագործակցության հաստատում երկու տարբեր մակարդակներում. 1) ընդունող կազմակերպությունների համագործակցության հարթակի ստեղծում (պարբերական հանդիպումներ, ֆեյսբուքյան խումբ և այլն) և ծրագրի համակարգման ունիվերսալ ձևերի մշակում, և 2) միջմարզային դրամաշնորհային ծրագրերի իրականացում:
- Առաջարկվում է ջատագովության գործընթաց մեկնարկել նախարարությունների (ՏԿԵՆ և ԿԳՄՄՆ) և ՏԻՄ-երի հետ ՏԺԴ-ի համագործակցության և երիտասարդական համայնքային, մարզային ու միջմարզային ծրագրերի ֆինանսավորման հնարավորությունների քննարկման ուղղությամբ:
- Ծրագրի բովանդակության առումով դժվարություններ են ծագել գործնական աշխատանքի՝ շահառուների ներգրավման և ՏԻՄ-երի հետ համագործակցության հաստատման մակարդակում: Փորձը ցույց է տվել, որ կարևոր է երիտասարդների շրջանում պրոակտիվ մոտեցումների զարգացումը և նրանց դրդումը սեփական ուժերով լուծելու ծրագրերի իրականացման ընթացքում ծագող խնդիրները:
- Շրջանավարտները և ընդունող կազմակերպությունները դժգոհություն են արտահայտել դրամաշնորհային ծրագրերի իրականացման համար նախատեսված ժամանակահատվածի կարճության վերաբերյալ: Սա նշանակում է ոչ միայն, որ որոշ դեպքերում կարելի է վերանայել

Ժամանակացույցերը, այլև, որ շատ կարևոր է ինչպես մասնակիցների, այնպես էլ ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում զարգացնել ժամանակի պլանավորման և կառավարման հմտություններ:

- Առաջարկվում է ծրագրի ուսումնական պլանում ավելի մեծ ուշադրություն դարձնել դրամաշնորհային ծրագրեր նախագծելու գրագիտությանը (այդ թվում՝ նպատակների ձևակերպում, տրամաբանական շրջանակների կազմում, ռիսկերի գնահատում, բյուջեի կազմում և այլն) վերաբերող հատվածին: Ընդունող կազմակերպությունների ներկայացուցիչների առաջարկով այս գործառույթը կարող է իրականացվել հենց ընդունող կազմակերպությունների կողմից, քանի որ նրանք իրականացնում են մարզերում դրամաշնորհային ծրագրերի համակարգման գործառույթը:

Հավելված 1

5 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը նվազագույն գնահատականն է, իսկ 5-ը՝ առավելագույն, գնահատեք խնդրեմ դասընթացավարներին ըստ հետևյալ բաղադրիչների:

	Մատուցած նյութի հստակություն					Տիրապետումը մատուցված նյութին/ բովանդակությանը					Դասընթացի ժամանակացույցի /կառավարման հմտությունը				
	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5
Վահրամ Շահբազյան	0	0	6	12	45	0	0	2	11	50	0	0	4	13	46
Դավիթ Մարգարյան	0	0	2	12	49	0	0	2	10	51	0	0	3	11	49
Միքայել Հովհաննիսյան	0	0	2	10	51	0	0	2	9	52	0	0	2	8	53
Ջուլյա Սահակյան	1	0	2	19	41	1	0	4	16	42	1	0	2	21	39
Արմեն Գրիգորյան	0	0	6	18	39	0	0	6	16	41	0	0	7	16	40
Նանե Պասկևիչյան	0	0	3	17	43	0	0	3	16	44	0	0	3	15	45
Աննա Դորուխյան	0	0	3	11	49	0	0	3	8	52	0	0	3	10	50
Նիկոլայ Հովհաննիսյան	1	0	4	13	45	0	0	5	10	48	0	1	4	12	46
Իզաբելլա Մարգարյան	0	0	4	16	43	0	0	4	11	48	0	0	4	13	46
Գայանե Մկրտչյան	0	0	3	17	43	0	0	3	15	45	0	0	3	16	44
Մարինա Այվազյան	0	0	5	19	39	0	0	6	17	40	0	0	5	20	38
Հասմիկ Մանասյան (Գրիգորյան)	0	0	5	23	35	0	0	4	20	39	0	0	5	20	38
Կարեն Հովհաննեսյան	0	0	3	13	47	0	1	2	13	47	0	1	3	12	47

Հյուսիսային փնջի դասընթացավարներ

	Մատուցած նյութի հստակություն					Տիրապետումը մատուցված նյութին/ բովանդակությանը					Դասընթացի ժամանակացույցի /կառավարման հմտությունը				
	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5
Աննա Անտոնյան	0	0	2	16	20	0	0	2	18	18	0	0	3	14	21
Էդգար Քոչարյան	0	0	3	16	19	0	1	3	11	23	0	0	3	14	21

Բախշիկ	0	1	1	15	21	0	1	1	14	22	0	1	1	14	22
Հարությունյան	0	0	2	14	22	0	0	1	15	22	0	0	2	13	23
Սարգսրիտա															
Գրիգորյան	0	1	1	14	22	1	0	1	13	23	0	0	1	16	21
Համլետ Սուջյան	0	2	2	12	22	1	1	1	14	21	0	1	2	13	22
Վաղինակ															
Հովհաննիսյան	0	0	3	12	23	0	0	3	11	24	0	0	3	13	22
Արման Մատինյան	0	0	3	14	21	0	0	3	10	25	0	0	4	11	23
Հայրապետ															
Առուստամով	0	0	4	12	22	0	0	3	11	24	0	0	4	11	23
Լիանա Բազինյան	0	0	3	12	23	0	0	4	10	24	0	0	4	10	24
Արփի Թամրազյան	0	1	1	11	25	0	1	1	9	27	0	1	1	10	26
Լուսինե Քոչարյան	0	0	2	13	23	0	0	2	13	23	0	0	2	14	22
Անի Պապյան	0	3	3	9	23	0	2	4	9	23	0	3	3	9	23

Կենտրոնական փնջի դասընթացավարներ

	<i>Մատուցած նյութի հստակություն</i>					<i>Տիրապետումը մատուցված նյութին/ բովանդակությանը</i>					<i>Դասընթացի ժամանակացույցի /կառավարման հմտությունը</i>				
	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5
Քրիստինե Մկրտչյան	3	2	4	13	37	3	2	3	11	40	3	2	3	14	37
Համազասպ Խաչատրյան	4	1	3	13	38	4	1	2	14	38	4	1	2	13	39
Լիլիթ Փանոսյան	3	1	3	13	39	3	1	3	10	42	3	2	2	11	41
Վարդանուշ Հակոբյան	2	5	2	14	36	2	5	2	16	34	2	5	2	14	36
Սոնա Հովսեփյան	3	1	4	15	36	3	1	4	14	37	3	1	4	14	37
Մխիթար Գասպարյան	4	0	3	14	38	4	0	3	12	40	4	0	3	14	38
Լալա Խուրշուդյան	3	1	2	12	41	3	1	1	15	39	3	1	2	11	42
Ռազմիկ Մնացականյան	5	0	1	9	44	5	0	1	7	46	5	0	0	9	45
Մինաս Հակոբյան	3	1	3	13	39	3	1	3	13	39	3	1	1	15	39
Ալլա Սարգսյան	3	2	3	9	42	3	2	1	12	41	3	2	1	12	41
Վարդուհի Բարսեղյան	4	0	3	15	37	4	0	2	14	39	4	0	3	14	38
Քրիստինե Թաթոսյան	4	0	4	11	40	4	0	3	13	39	4	0	3	12	40

Սոնյա Օհանյան	5	0	4	12	38	5	0	3	13	38	5	0	3	13	38
---------------	---	---	---	----	----	---	---	---	----	----	---	---	---	----	----

Հարավային փնջի դասընթացավարներ

	<i>Մատուցած նյութի հստակություն</i>					<i>Տիրապետումը մատուցված նյութին/ բովանդակությանը</i>					<i>Դասընթացի ժամանակացույցի /կառավարման հմտությունը</i>				
	1	2	3	4	5	1	2	3	4	5	1	2	3	4	5
Հայկ Մկրտչյան	2	1	1	10	36	1	2	1	8	38	0	1	4	9	36
Նարինե Գալստյան	1	1	0	13	35	0	1	1	12	36	0	2	0	13	35
Նաիրա Ալավերդյան	0	2	1	5	42	1	1	1	8	39	0	2	0	9	39
Տաթևիկ Ղազարյան	0	1	4	5	40	0	2	2	10	36	0	1	3	7	39
Անահիտ Գրիգորյան	1	1	3	6	39	1	1	4	6	38	1	1	3	6	39
Արաքսի Խոյլունց	1	2	4	9	34	1	1	2	10	36	1	0	3	11	35
Անի Գրիգորյան	1	0	1	8	40	1	0	2	9	38	1	0	1	8	40
Ծովինար Ներսիսյան	1	3	4	11	31	2	1	5	8	34	2	1	4	11	32
Հայկազ Հարությունյան	2	2	2	11	33	2	1	2	11	34	2	1	2	9	36
Լիանա Գրիգորյան	2	1	2	10	35	2	0	3	9	36	2	0	3	12	33
Լիլիթ Հարությունյան	1	2	6	9	32	1	3	5	7	34	1	2	6	9	32
Հայկ Մկրտչյան	2	1	1	10	36	1	2	2	6	39	1	2	4	4	39
Նարինե Գալստյան	1	2	1	6	40	2	1	1	8	38	2	0	2	8	38



Սույն հրապարակումը պատրաստվել է Համայնքների ֆինանսիստների միավորման ֆինանսավորմամբ՝ «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամի կողմից:



ՏԵՂԱԿԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐՈՒԹՅԱՆ
ԴՊՐՈՑ



CRRC
Armenia